

ԵՊՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՅԻ

# ԱՍՏՂԱՓՈՒՆ

ՄԱԿԱԿԱՆ ԲԱԼԼԱԴ



ՆԱԿՆԵՐԻ ԼՈՒՆՆԱԿՆԵՐ

ԻԵՏՐԱՏ — 1-9-34 — ՅԵՐԵՎԱՆ

Գառ. խմբագիր՝ Ա. Հայրյան  
Տեխ. խմբագիր՝ Ս. Գառապարյան  
Սրբագրիչ՝ Հ. Մանուկյան

Գ Ե Կ Ը Թ Կ Ը Թ Կ Ը Թ Կ Ը Թ Կ Ը Թ Կ Ը Թ

Քլավշիկ (ը) 2400    հրատ. 2892    պատմիք 406    տիքում 4000

# ԱՍՏՂԱՓՈՒԾ

## I

Այս վոր պատմում եմ, հին Ժամանակ եր.  
Իմ ընկեր Հուրին՝ պուճուր աղջիկ եր.  
Պուճուր աղջիկ եր խուճուճ մազերով,  
Չալ չալ աչերով, անուշ նազերով:  
Այնքան պուճուր եր մեր Հուրին պայծառ,  
Վոր հաղիվ մենակ սայլին բարձրանար.  
Յե՛վ այդ պատճառով նրա ծեր ապին,  
Մի անգամ ահա, ամառվա տապին,  
Վերցրեց նրան գյուղական սայլով,  
Նիհարիկ, դանդաղ յեղների քայլով  
Անցավ վոյորուն ճամբեք ծուռ ու մուռ.  
Անցավ հանդ ու արտ, մի քանի բլուր,  
Անցավ չայիրներ ու արտեր նորից,  
Ու կանգնեց մի մեծ արտի սինոռին.  
Այստեղ ապին իր պուճուր աղջկա  
Այտերն համբուրեց մի քանի անգամ.  
— Գնա՛, փունջ կապի քեզ համար, սասա՛վ.—  
Խուրձեր արա ես հասկերից հասած:



16414 H





Լայնարձակ փռված գույնզգույն դաշտով,  
 Արտերի սրտով, արտերի մոտով  
 Հոսում եր բարակ շունչը մեղմ հովի,  
 Արտերը փոխում ալեծուսի ծովի:  
 Յեւ ասում էին կարծես նրանք ել—  
 — Մեր տեսությանը՝ բարո՛ւ էս յեկել:—  
 Տե՛ս, հանգը վարքան սիրուն, գույնզգույն.  
 Մի տեղ դեղին է, մի տեղ՝ յերկնագույն,  
 Մի տեղ բաց կանաչ, մի տեղ ալ կարմիր,  
 Վոնց վոր նախշերը ձեր տան ջեջիմի:  
 Դեղին տուղտերին վոսկի թիթեռներ,  
 Վորոնք կթռչեն, թե՛ ուղես բռնել.  
 Բզեզներն հապա, վորոնք վոր թեթև՝  
 Վոսկի մեջք ունեն, թեվեր արծաթե.  
 Յեւ մըջյունները աշխույժ ժրաջան  
 Աշխատում են, վոր սո՛ված չմնան...

Հենց այդ ժամանակ մի սիրուն բզեզ  
 Առաջ սլացավ սուր դնդակի պես.  
 Հուրու ալտերին քսվելով անցավ,  
 Ճախրեց ողի մեջ և անհայտացավ.  
 Հետո մի թիթեռ խոչոր, պուտպուտիկ,

Մահեց կարճրած այտերին՝ մոտիկ-  
 ձախրեց ողբի մեջ և վազեց առաջ,  
 նստելով դեղին մի տուղտի վրա.  
 Հուրին ուղեց վոր բռնի թիթեռին,  
 Բայց ողում մնաց շարժումը ձեռի.  
 Իսկ վարից՝ մի փուռ չար ու դիվային  
 Պինդ կառչեց նրա չթե դերիային.  
 Վոնց վոր Ձուլումաթ աղան այն տարին՝  
 նայեց խեղճ ապու ուղիղ աչքերին.  
 Պինդ բռնեց փեշը և հանդակըտուր  
 Գոռաց.— դե՛, Ավա՛դ, հմի պարտքս տուր...

IV

Այդ փուշը վոնց վոր Ձուլումաթ աղան  
 ձիշտ այնպես Հուրու հոգու հետ խաղաց.  
 Ու նա տաքացած, փեշը թափ տվեց,  
 Չոր փայտի նման փուշը կոտորվեց.  
 Մեկ ել սուր փշի կոտորված տեղում  
 Կաթնանման մի սպիտակ հեղուկ  
 Լճացավ, թափվեց. թանձրացավ, հետո՝  
 Կարմրեց վոնց վոր արյունը մարդու...  
 Ձեռքով յերբ կարմիր հեղուկին առավ՝  
 Պուճուր Հուրիի դարմանքը տարավ.  
 — Արյո՛ւն, ճչաց նա. մի խոր սարսափից,  
 Յե՛կ, արյունը, տե՛ս. արյունը... ապի՛...



02/12/1



.. Ապին գերանդին շարտեց մի կողմ,  
 Վազելով գնաց իր աղջկա քով:  
 Նայեց սուր փշին, նայեց աղջկան,  
 Յեվ խաչակնքեց դեմքն յերեք անգամ.  
 Տնքաց գյուղական ձայնով խանձված.  
 — Մինն նա՛ յե անմեռ ու մինն ել աստված.—  
 Եսպես եմ լսել ես փշի մասին.—  
 Եստով ծեծել են սուրբ Քրիստոսին.  
 Ենքան են ծեծել ես փշով նրան,  
 Վոր ալ արին ե մնացել վրան.  
 Հետո իրենց շառն առած իրենց հետ՝  
 Չարչարողները կորել են անհետ,—  
 Անտակ ծովի մեջ, անտատ քարի տակ.  
 Իսկ Աստղափշի կաթը սպիտակ  
 Յերբ հողածնի աչքըն ե առնում՝  
 Են վախտը կարմիր արին ե դառնում...

Վոչինչ չխոսեց ու պուճուր Հուրին  
 Յերկյուղով նայեց ապու աչքերին:  
 Յեվ այնուհետեվ քնած, թե արթուն  
 Նա աստղափշի շուրջն եր մտմըտում:—  
 Ինչո՞ւ յեն ծեծել, ի՞նչ ե արել նա,

Վոր արյունը այդ փշի մեջ մնա.  
Յեղ յեթե կտարած փուշը կաթ տվեց,  
Պատճառն ի՞նչ է, վոր արյունի փոխվեց...  
Յեղ մտածում եր որեր, տարիներ,  
Բայց ի՞նչպես նրա դաղտնիքը գտներ:  
Շատ պուճուր եր, շատ, Հուրին այն տարին,  
Վոչ չարը գիտեր ու վոչ ել բարին...

## VII

Այսպես՝ որեր ու տարիներ անցան  
Յեղ պուճուր Հուրին արդեն մեծացավ.  
Իր չարն ու շառը առած իրեն հետ՝  
Կորով Զուլումաթ աղան ել անհետ.  
Խորհուրդներ կային քաղաքում, գյուղում,  
Ու պայծառ լույսեր՝ Հուրու ուղեղում.  
Հազար դաղտնիքներ ու հարցեր դժվար  
Իմացավ Հուրին իր մտքերով վառ...  
Յեղ մի որ, Հուրին յեկավ Յերևան  
Յեղ մտով ահա նա համալսարան...  
Անցավ չորս յերկար ու դժվար տարի,  
Փայլուն ավարտեց ուսումը Հուրին  
Գյուղատնտեսի կոչումով, հպարտ,  
Նա մեկնեց իսկույն գյուղական ճակատ...





ՊԵՏ. ՉԱՆԱՍՆԱՐԱՆ

Յեւ վ ահա մի որ, ամառվա տապին,  
 Հիշելով փուշն ու իր մեռած ապին,  
 Մանուկների հետ ուրախ ու զվարթ  
 նա գնաց մոտիկ չհնձած մի արտ:  
 Կանգնեց նա կանաչ արտի սինուռին,  
 Տխուր անցյալը հիշելով նորից...  
 Հիշեց նա իր ծեր, խղճալի ապուն,  
 Վորը խավարի մեջ եր խարխափում.  
 Յեւ իր մանկության որերը անցած,  
 Վորոնք շունեյին վոչ մի շող պայծառ,  
 Հիշեց նա ապու հեքյաթները սին,  
 Վորն հավատում եր, յերկրի յերեսին  
 Մարդը պիտի վոր սրբին հավատա.  
 Սրբին աղոթի ու սուրբն ել կտա...  
 Հիշեց բոլորը ու ժպտաց հուշիկ  
 Ու մոտեցավ մի մեծ Աստղափուշի:

— Մանուկներ, ապա՛, հավաքվե՛ք ինձ մոտ,  
 նայե՛ք այս փշին մի լավ մոտեմոտ.  
 Տեսե՛ք, կոտրում եմ ահա յես նրան,  
 Իսկ դուք նայեցեք կոտրածի վրա:

Հուրին մի վոտքը յերբ ամուր սեղմեց՝  
 Չոր խրթաց իսկույն Աստղափուլը մեծ.  
 Յեվ կոտորած տեղից դուրս ծլլաց իսկույն  
 Կովի կաթի պես կաթը ձյունադույն.  
 — Տես՛ք, այս կաթին վոչինչ չեմ խառնում,  
 Բայց սպիտակը կարմիր ե դառնում:  
 Յեվ մատով կարմիր մի կաթիլ առավ...  
 Յերեսաներին դարմանքը տարավ:  
 Նայեցին իրար, նայեցին Հուրուն,  
 Յերկյուղը նստեց նրանց աչքերում...  
 Իսկ Հուրին ժպտաց յերջանիկ ժպտով  
 Յեվ դադանիքն ասավ ցնծադին սրտով.  
 — Հրա՛չք կարծեցիք... ել հրաչք չկա...  
 Մեր շուրջն ողի մեջ մի տեսակ դազ կա,  
 Յերբ կաթն ու գազը իրար են առնում՝  
 Սպիտակն այդպես կարմիր ե դառնում...

X

Հուրին լուց ու յերջանիկ ժպտաց.  
 Ու կանգնած թմբից նա իջնելով ցած՝  
 Մանուկներին այդ ուրախ, ժպտերես,  
 Շաղ տվեց թեթև թիթեռների պես,  
 Վոր թռչեն անհող, վոր խաղան անվերջ,  
 Ազատ դաշտերի տարածության մեջ:

15



ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



220041491

A 41491

(054)

A  $\frac{\pi}{41491}$

ԳԻՆԸ 1 ՈՒՈՒԸԼԻ

Տօցօմօն Դարօնցի  
Աստխալսի

Դիւ ՏՏՐ Արմենի, 1934 ց. Զրիւան